ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՆՄԾՏԻԿ-ՄԱԾՁԲ-18/13

ք. Երևան «17» հուլիս 2018թ.

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամը, ի դեմս գործադիր տնօրեն Արմեն Աբրահամյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Բիզնես Էքսպերտ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Սերի Հարությունյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է *Հիմնական միջոցների վերագնահատման ծառայության* մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 288 000 (երկու հարյուր ութսունութ հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 28-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ

ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 13 /տասներեք/ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ	«Բիզնես էքսպերտ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, փ. Կ.Ուլնեցի 68	Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Արշակունյաց 4, 13-րդ հարկ
Բանկը՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Զեյթուն մ/ճ	Բանկը՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ,
Հ\Հ 1635180125 43	Հ\Հ 1930062213890100
ՀՎՀՀ 02602449	ՀՎՀՀ 02660466
Գործադիր տնօրեն՝	Տնօրեն՝
---------- Ա.Աբրահամյան	---------- Մ.Հարությունյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« 17 » հուլիսի 2018թ. կնքված N «ՆՄՇՏԻԿ-ՄԱՇՁԲ-18/13» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

	Ծառայության					
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	մեկ միավորի գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ
1	73432100/1 Հիմնական միջոցների վերագնահատման ծառայություն	Շարժական գույք հանդիսացող հիմնական միջոցների (համաձայն ստորև Աղյուսակ 2-ի) վերագնահատման հետ կապված ծառայությունների մատուցում. -Պատվիրատուի կողմից տրամադրված հիմնական միջոցների ցանկի հիման վրա՝ ցանկում ներառված հիմնական միջոցների իրական արժեքի վերագնահատում: Աշխատանքների արդյունքը պետք է ամփոփվի հետևյալ գործողություններով՝ 1. հիմնական միջոցների մնացորդային օգտակար ծառայության ժամկետների որոշում, 2. հիմնական միջոցների դասակարգում՝ ըստ հաշվային պլանի, 3. հիմնական միջոցների ֆիզիկական վիճակի որոշում, 4. հիմնական միջոցների տեխնիկական բնութագրերի ճշտում, 5. հիմնական միջոցների ֆոտոնկարահանում, 6.գույքահամարների մշակում, 7.հիմնական միջոցների պիտակավորում՝ հայալեզու քյու ար կոդ պարունակող պոլիամիդե պիտակներով 8.գնահատման ցուցակների կազմում, գնահատման արդյունքների համեմատական տեղեկագրերի կազմում և տրամադրում թղթային և էլեկտրոնային տարբերակներով,	դրամ	288 000	1	288 000
Պայմանագրի գործողության ժամկետ						
Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 20 աշխատանքային օր						

Աղյուսակ 2

Հիմնական միջոցների քանակային մնացորդներ 12.07.2018թ.-ի դրությամբ		
	Անվանում	Քանակ հատ
1	Binding Machine LAMIREL	1
2	Book shelf Brown, wood	3
3	Car 2123 Chevrolet Niva	1
4	Computer Supermicr	12
5	Conference room chairs Black, metal	29
6	Conference table Brown, wood, 8 pcs	1
7	Copy Machine Kyocera KM-2030	1
8	Desk phone Panasonic, KX	13
9	Electric kettle թեյնիկ HD4646/70	1
10	File Cabinet Metal	2
11	Mini telephone station Panasonic KX-TDA100	1
12	Monitor Neovo F-419	5
13	Monitor Neovo F-417	7
14	Mother phone Panasonic, KX	1
15	Notebook MS- 16362	1
16	Notebook Z96F	1
17	Office armchair Dark Grey	4
18	Office desk Brown, wood	7
19	Oil heater Nikai	1
20	Panasonic KX-T7665 Հեռ.	1
21	Paper cutter S.B.T PAPER CUTTER	1
22	Printer color Canon PIXMA MP250	1
23	Printer color HP DeskJet D2360	1
24	Refrigerator big LG	1
25	Roll chair Black	3
26	Roll chair Grey	3
27	Server black Supermicro	2
28	Server white Supermicro	2
29	Table drawer brown wood	6
30	Water cooler B7CH	1
31	Water Cooler/Heater tank WBF - 210 LA	1
32	White board	2
33	Աթոռ	9
34	Աթոռ (ISO BBLACK)	29
35	Աթոռ (փափուկ)	55
36	Աթոռ գրասենյակային	21
37	Աթոռ(Jupiter GTP)	32
38	Ականջակալ Creative Sound Blaster Tactic 3D	10
39	Անխափան սնուցման սարք (APC UPS B500R-AS)	2
40	Անխափան սնուցման սարք (APC UPS SUA 1500I)	78
41	Անխափան սնուցման սարք (APC APS 650)	1
42	Անխափան սնուցման սարք (APC Smart UPS RT 5000)	3
43	Անխափան սնուցման սարք (APC Symetra)	1
44	Անխափան սնուցման սարք (GCM Power Com BNT-800AP)	42
45	Անխափան սնուցման սարք (Hendan)	1
46	Անխափան սնուցման սարք UPS PowerCom RPT-800AP	52
47	Անխափան սնուցման սարք AEG UPS	17
48	Անվտանգության սարք (D-LINK DFL-800)	1
49	Աշխատանքային գրասեղան/2000*800*740h/	1
50	Ապրանքներ՝ սերվերի արդիականացման համար(HPEVAM6612 3.5-inch SAS Drive Enclosure(Aj832A)-1 հատ, HP M66)	2
51	Աստիճան	1
52	Ավտոմատ հեռախոսակայան (PANASONIC)	1
53	Ավտոմեքենա (HYUNDAI TUSCON ix 35 2.0 A/T)	1
54	Ավտոմեքենա (Nissan SunnyPE 2010)	1
55	Ավտոմեքենա HYUNDAI SANTA FE vin KMHSH81BDBU668505	1
56	Արտաքին կոշտ սկավառակ	1
57	Արտաքին տեսախցիկ(IR 6325 55mm Bullet Camera)	2
58	Արտաքին տեսախցիկ(IR 6325 55mm Bullet)	1
59	Բազկաթոռ	11
60	Բազկաթոռ (պտտվող)	13
61	Բազմաֆունկցիոնալ տպիչ Lexmark X860de4	1
62	Բազմաֆունկցիոնալ սարք (lexmark X363 dn)	1
63	Բազմաֆունկցիոնալ տպիչ (Lexmark W850dn)	1

64	Բազմաֆունկցիոնալ տպիչ Multifunctional Printer Canon i-SENSYS MF6140dn	10
65	Բազմոց	3
66	Բջջային հեռախոս Nokia C30	1
67	Բջջային հեռախոս Samsung B310E Blue	1
68	Գազի ճնշման կարգավորիչ	1
69	Գեյզեռ GEMSAN C-900	1
70	Գեյզեռ Ծորակ L.I.Z. 3KW (9322)	2
71	Գեներատոր	1
72	Գրասեղան	9
73	Գրասեղան երկար	5
74	Գրասեղանի շարժական դարակ	15
75	Գրատախտակ ֆլիպ չարտի հենակով	2
76	Դիմադիր սեղան /900*800*700h/	1
77	Դյուրակիր համակարգիչ HP Elitebook 820 Notebook PC	4
78	Դյուրակիր համակարգիչ HP ProBook 470 G3 Intel Core i5-6200U	1
79	Եռ. էլ. բազմասակ. հաշվիչ	1
80	Եվրոպատուհաններ (18 քառ. մ.)	1
81	Զգեստապահարան (550x400x2100)	1
82	Էլ. սալիկ SAACHI NHLCP	1
83	Էլեկտրական տաքացուցիչ	6
84	Թեյնիկ BRAUN WF300RED	1
85	Թվային ընդունիչ-ձայնագրիչ (SONY ICD-UX522/S)	1
86	Թվային հեռախոս (Panasonic KX-T)	9
87	Թվային տեսագրման սարք՝ 16 տեսախցիկի մուտքով	1
88	Լազերային տպիչ (HP Laser Jet Enterprise 700 M712dn (CF236A))	2
89	Լազերային տպիչ HP CLJ CP5225N (CE711A) A3	1
90	Լուսահպման մեքենա	1
91	Լվացարան	2
92	Կազմող սարք (ծալք)	1
93	Կարտոնառեզ	1
94	Կերխեր՝ բարձր ճնշման սարք	1
95	Կլորացնող սարք	4
96	Կողային կցորդ (800x500x650)	1
97	Կոմպրեսոր 25 լ	1
98	Կուլեր BEKO	1
99	Կտրող սարք	1
100	Համակարգիչ DELL OptiPlex 9020MT	5
101	Համակարգիչ DELL OptiPlex 9020SFF	2
102	Համակարգիչ (DELL Optiplex GX 110)	20
103	Համակարգիչ (DELL P2 Optilex GX-1)	3
104	Համակարգիչ (DELL P4, Optiplex GX -260)	31
105	Համակարգիչ (G550)	2
106	Համակարգիչ (Mercuri P4 և մոնիթոր DELL LCD-19)	3
107	Համակարգիչ (PC 5 DELL Optilex -210 L)	11
108	Համակարգիչ (PC3 DELL Optilex GX-620)	2
109	Համակարգիչ (AG Core I5 2500)	2
110	Համակարգիչ (DELL Optiplex GX320)	2
111	Համակարգիչ (DELL PC1 Optiplex-320)	77
112	Համակարգիչ (HP P3, Vectra)	9
113	Համակարգիչ (MERCURY P4, Celeron)	20
114	Համակարգիչ (P3 Accorp)	1
115	Համակարգիչ (P4 2,26ghz)	5
116	Համակարգիչ (Pentium 3 Intel)	1
117	Համակարգիչ 1 HP ProDesk 490 G3 Microtower Intel Core i7-6700	12
118	Համակարգիչ 2 HP ProDesk 490 G3 Microtower Intel Core i5-6500	40
119	Համակարգիչ I5 (հավաքված)	2
120	Համակարգիչ(LG)	1
121	Համակարգչային սարքավորում Dell Wyse Xenith 2	10
122	Համակարգչի կոշտ սկավառակ 2 TB	3
123	Համակարգչի կոշտ սկավառակ 300 GB	5
124	Հարվածային գայլիկոնիչ (VTP18)	1
125	Հեռախոս բջջային(Samsung)	1
126	Հեռախոս D LINK DPH150S\E\F4	10
127	հեռախոս՝ բջջային (Alcatel 4035 D pop D3 White)	1
128	Հեռուստացույց HISENSE 55N5300	1
129	Հեռուստացույց (BEKO)	1
130	Հեռուստացույց (HISENSE LEDN32D33)	1
131	Հեռուստացույց (LG 42LB652V)	1
132	Հեռուստացույց (LG)	2

133	Հեռուստացույցի տակդիր	1
134	Ղեկավարի սեղանի կողաղիր սեղան՝ բաց գույնի (սեղան)	2
135	Մամլիչ ԲՊՊ-75	1
136	Մարտկոցով պտուտակահան(HITACHI DB3DL2)	1
137	Մետաղապլաստե դուռ	2
138	Մետաղյա պահարան՝2000 x 1000 x400 մմ	1
139	Մետաղյա սեյֆ (SAFEWELL)	1
140	Մոնիթոր (DELL Trinitron)	7
141	Մոնիթոր (PHILLIPS 105E)	5
142	Մոնիթոր (VIEW SONIC E70)	3
143	Մոնիթոր (VIEW SONIC E71F)	3
144	Մոնիթոր (VIEW SONIC)	1
145	Մոնիթոր (ZENITH)	2
146	Մոնիթոր (AST F562D)	1
147	Մոնիթոր (COMPAQ V45)	1
148	Մոնիթոր (CTX CGP1772E)	2
149	Մոնիթոր (CTX)	5
150	Մոնիթոր (DELL)	2
151	Մոնիթոր (DELL D825HT)	2
152	Մոնիթոր (DELL D828L)	1
153	Մոնիթոր (DELL E2211H)	7
154	Մոնիթոր (DELL E770P)	1
155	Մոնիթոր (DELL E771P)	5
156	Մոնիթոր (DELL E773C)	124
157	Մոնիթոր (DELL E781P)	1
158	Մոնիթոր (DELL LCD 19)	1
159	Մոնիթոր (DELL M781 P)	9
160	Մոնիթոր (DELL M782P)	2
161	Մոնիթոր (DELL P-780)	2
162	Մոնիթոր (HP)	3
163	Մոնիթոր (LCD DELL E177 FP)	13
164	Մոնիթոր (LCD LG)	14
165	Մոնիթոր (SAMSUNG Sync Master 550s)	2
166	Մոնիթոր (SAMSUNG Sync Master 793DF)	6
167	Մոնիթոր (SAMSUNG SyncMaster 551s)	2
168	Մոնիթոր (SAMSUNG)	4
169	Մոնիթոր (SAMTRON)	2
170	Մոնիթոր (Trinitron)	1
171	Մոնիթոր 1 HP ProDisplay P240va 23.8 inch	12
172	Մոնիթոր 2 HP EliteDisplay E222 21.5 IPS w/LED	28
173	Մոնիթոր 3 HP EliteDisplay E202 20 in LED	12
174	Մոնիտոր Dell LCD E2014H 49,4cm	15
175	Մոնիտոր Dell LCD E2414H 24 FHD	2
176	Ներքին տեսախցիկ (IB 6325Ball IR Dome)	1
177	Նոութբուք (Dell Latitude D820)	1
178	Շարժական զզրոց՝3 դարակով, կենտ. փակ. (440*450*560)	1
179	Շիթային տպիչ Epson ST.PHOTO L 312	1
180	Չիրկիզվող պահարան (JUNEMA)	1
181	Պահադարակ պատի	24
182	Պահարան	43
183	Պատուհան՝1.86.քառ.մ.	1
184	Պրոյեկտոր	1
185	Պրոյեկտոր (Benq MS-502 DLP)	1
186	Պրոյեկտոր ACER	1
187	Պրոյեկտոր ACER P1100C	1
188	Պրոյեկտոր Optima FW5200 Projector	4
189	Ջուր տաքացնող և սառեցնող սարք(HITACHI HWD1000)	2
190	Ջրի տաքացուցիչ ARISTON SG80	1
191	Սառնարան	1
192	Սեղան	18
193	Սեղան՝ղեկավարի,բաց գույնի	1
194	Սեղան՝դիմադիր	1
195	Սեղան՝մեծ (ՏՆՕՐԵՆԻ)	1
196	Սեղան զրսենյակային	1
197	Սեղան երկար	15
198	Սեղան երկար, սպիտակ	1
199	Սեղան համակարգչի՝ երկար	1
200	Սեղան համակարգչի՝ մետաղյան ոտքերով	1
201	Սեղան մեկ պահարանիկով	26

202	Սեղան սովորական	16
203	Սեղան Օպերատորի	10
204	Սեղան՝ կսիալուսնաձև	2
205	Սեղան՝ փայտյա	1
206	Սեղան՝ անկյունային	1
207	Սեղան՝ համակարգչի բարձր	4
208	Սեղան՝ անկյունակով, բաց գույնի	1
209	Սեղան՝ համակարգչի	6
210	Սեղան՝ փոքր	2
211	Սեղան՝ փոքր ժուռնալի	2
212	Սեղանի բաժանարարներ	10
213	Սեղանի դարակ	13
214	Սեղանի պահարան	10
215	Սեղանի վրայի դարակ (սեղանի շարժական դարակ)	2
216	Սեղմող սարքավորում	1
217	Սերվեր (639261-425 HP ML 110 G7 E3 -1220 4 core, N Tower 4U)	1
218	Սերվեր (DELL POWER Edge 1800SCSI	2
219	Սերվեր (DELL Power Edge 2900 Tower Chassis)	1
220	Սերվեր (DELL POWER Edge 430 SATA)	58
221	Սերվեր (Storage DELL PoweerVault 221S Tower SCSI)	1
222	Սիզամարգի հնձիչ՝ էլեկտրական, 1000Վ, 32սմ (WLFG-SELECT3200E)	1
223	Սկաներ (DELL)	1
224	Սվիչ (D Link DGS1008D)	1
225	Սվիչ (D Link DGS1016D)	1
226	Սվիչ (Dell Power Connect 2324)	11
227	Սվիչ (DELL)	2
228	Սվիչ (DES-1008D)	3
229	Սվիչ (D-Link)	1
230	Սվիչ 10/100 16 պորտ	3
231	Սվիչ 10/100 24 պորտ	1
232	Սվիչ D LINK DES320018	1
233	Սվիչ D-LINK DVG2032S\16CORU	1
234	Սվիչ D-LINK DVG-3016S	1
235	Սվիչ TP-LINK TL-SF1024D	3
236	Սվիչ,16 պորտ	2
237	Տեսագրման և վերարտադրման սարքավորում NHDR-3116 AHD	1
238	Տեսախցիկ (Digital Camera Panasonic)	1
239	Տպիչ (CF484A HP Laser Jet Pro MFP M225dn)	2
240	Տպիչ (HP CLJ CP 1215)	1
241	Տպիչ (XEROX Phazer-3117)	14
242	Տպիչ (XEROX Workcenter PE 120i)	38
243	Տպիչ (XEROX Workcentre M118)	1
244	Տպիչ CANON IP 4940	1
245	Տպիչ(Lexmark MS 310dn)	10
246	Տպիչ(HPLJ2200)	1
247	Ցանցային բաժանարար / 8 պորտ	6
248	Ցանցային բաժանարար /16 պորտ	6
249	Ցանցային բաժանարար /24 պորտ	5
250	Ցանցային բաժանարար - MikroTik CRS326-24G-2S+RM	1
251	Ցանցային բաժանարար (24 պորտ,10/100, մետաղյա իրանով)	1
252	Ցանցային բաժանարար /24 պորտ	1
253	Ցանցային բաժանարար 10/100 16 պորտ	1
254	Ցանցային բաժանարար 10/100 24 պորտ	1
255	Ցանցային բաժանարար 10/100 8 պորտ	8
256	Ցանցային երթուղղիչ (CCR1009-7G-1C-1S+)	1
257	Ցանցային էկրան Cisco ASA5506	1
258	Ցանցային Հեռախոս D-Link DPH-400SE/F4A	20
259	Ցանցային Հեռախոսի մոդուլ D-Link DPH-400EDM/E/F3	2
260	Ցանցային սարք (Cisco 878- K9)	1
261	Ցանցային սարք (Cisco WS- c 2950 G-48-El)	2
262	Ցանցային տեսախցիկ D-Link DCS-933L/A2A	3
263	Օդակարգավորիչ (HISENSE AS30HR4SQBD)	1
264	Օդակարգավորիչ (HISENSE AS36HR4SDVT)	1
265	Օդակարգավորիչ (VIKASS VAC18RG)	1
266	Օդակարգավորիչ HISENSE 12HR4SVD TD	8
267	Օդակարգավորիչ HISENSE 18HR4SFA TD	2
268	Օդակարգավորիչ HISENSE 24HR4SFB TD	1
269	Օդակարգավորիչ HISENSE 30HR4SQB TD	2
270	Օդակարգավորիչ HITACHI (RAS-ME 10HZ)	4

271	Օդամուղ (HITACHI RB40SA)	1
272	Օդորակիչ (BEKO)	3
273	Օդորակիչ (CRYSTAL)	2
274	Օդորակիչ (GENERAL)	7
275	Օդորակիչ (LG)	1
276	Օդորակիչ (SANYO)	2
277	Օդորակիչ (Tadiran)	1
278	Օդորակիչ HITACHI	1
279	Օդորակիչ VESTEL	3
280	Օպերատորի բազկաթոռ	10
281	Օֆսեթ տպագր.մեքենա (DOMINANT)	1
282	Ֆոտոկոնդուկտոր (LEXMARK X854e)	1
	Ընդամենը	1717

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, փ. Կ.ՈՒլնեցի 68
Բանկը՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Զեյթուն մ/ճ
Հ\Հ 163518012543
ՀՎՀՀ 02602449
Գործադիր տնօրեն՝
----------Ա.Արրահամյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Բիզնես էքսպերտ» ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Արշակունյաց 4, 13-րդ հարկ
Բանկը՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ,
Հ\Հ 1930062213890100
ՀՎՀՀ 02660466
Տնօրեն՝
----------Ս.Հարությունյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
« 17 » հուլիսի 2018թ. կնքված
N «ԱՄՏԻԿ-ՄԱԾՁԲ-18/13» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	73432100/1	Հիմնական միջոցների վերագնահատման ծառայություն	-	-	-	-	-	-	-	288 000	288 000	288 000	288 000	288 000	288 000

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:
** Վճարումն իրականացվելու է ծառայությունների մատուցումից հետո՝ երկկողմ ստորագրված հանձման-ընդունման արձանագրության հիման վրա:

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ
«Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, փ. Կ.Ուլնեցի 68
Բանկը՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Զեյթուն մ/ճ
Հ/Հ 163518012543
ՀՎՀՀ 02602449

Գործադիր տնօրեն՝
---------- Ա.Աբրահամյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ
«Բիզնես Էքսպերտ» ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Արշակունյաց 4, 13-րդ հարկ
Բանկը՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ,
Հ/Հ 19300622138901 00
ՀՎՀՀ 02660466

Տնօրեն՝
---------- Ս.Հարությունյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն